

ՈՒՍՈՒՑՉԵՐԻ ԵՆՔՆԱԼԻՌՈՒԹԻՒՆԸ.

(Յունիս-Հունիս թէ Արշակունիք 1880 :)

1. Աւսուցի իմանակրուրիան կարեւուրիւնը 2, ուսուցի իմանակրուրիան ուղղուրիւնը 3, ուսուցի իմանակրուրիան միջցները ա, շարատրութեանց թերեցունն եւ ուսանելին բ, դիտել մանկանց եւ ուսուցանել նոցա. գ, մանկավարժական խօսակցուրիւններ 4, Ներիին զգացմունիք, որպէս կական պայման իմանակրուրիան 5, Բարոյական իմանակրուրիան կարեւուրիւնը,


1. Մեր վերը յայտնիցոյց տուինք նախազատրաստութեան կարևորութիւնը այն անձի համար, որը նուիրումէ իրան ուսուցչական պաշտօնին. Սակայն ուսուցիչը երրեք չպիտի մնայ իւր հոգեոր կրթութեան այն աստիճանի վերայ, որով ոտք է կախած նա առաջին անգամ իւր մանկավարժական ասպարէզը. նա պիտի աստիճանաբար ինքնակրթուի, ինքնակրթութիւնը ուսուցչին անհրաժեշտ է: Նախ նորա համար, որ միջոց ունենայ արդիւնաւոր կերպով ներգործել աշակերտաց վրայ, Ավ որ կանգնած մնումէ մի և նոյն աստիճանի վրայ: Նա չէ կարող առաջ մղել ուրիշներին, նա չէ կարող այդ եռանդը (յառաջադիմութեան) շարժել ուրիշներում: Այն ուսուցիչը, որի մէջ մեռած կամ խեղդւած է ինքնակրթութեան թափը, նա չէ կարող ունենալ կենդանացնող և յառաջադիմող ներգործութիւն աշակերտաց վերայ: Երկրորդ՝ որ ինքը յետ չմնայ դասական առարկայի յառաջ շարժողութիւնից և նորա մեզօթիկան մշակութիւնից, նորա դասական առարկայի բովանդակութիւնը և առաւելապէս մեզօթը պէտքէ մշակի: Եւ եթէ ուսուցիչը ուշադրութիւն չէ դարձնում նոցա մշակելուն, նա յետէ մնում այն ուսուցիչներից, որոնք խորթ չեն ինքնակրթութիւնից, բացի սորանից, ուսուցիչը չաշխատելով իւր ինքնակրթութեան մասին, շատ բան մօռանումէ և նորա ունեցած տեղեկութիւնները ևս կորցնումն իւրեանց թարմութիւնը: Այդպիսով նորա մտաւոր պաշարը շուտով սպառւումէ և նա վերջ ի վերջոյ դառնումէ անընդունակ իւր կոչման, որովհետեւ առած է ով որ առաջ չէ շարժում, նա յետ է սայմայքում: Երրորդ՝ ինքնակրթութիւնը անհրաժեշտ է ուսուցչին նորա համար, որ նա կարողանայ իւր գործունէութեան պահանջմանը տալ աւելի արդիւնաւոր ելք: Եթէ այդ պահանջմունքը չկարողանայ գտնել ելք գէպի ինքնակրթութիւնը ուղղած գործունէութեան մէջ, նա կդտանէ ելք այնպիսի մի գործունէութեան մէջ, որը ոչ թէ միայն անօգուտ, այլ և շատ անզամ վտանգաւոր է: Արովհետեւ այն ժամանակ աշակերտաց չետ ունեցած զբաղմունքից աղատ ժամանակը ուսուցիչը կգործազրէ անօգուտ գործունէութեան վրայ, Գոյն նէ ժամանակը աղատէ, ինչպէս ասումնն փոխանակ այդ ժամանակը գործազրելու մի աւելի արդիւնաւոր պահանջման համար: Վերջապէս չորրորդ՝ ինքնակրթութիւնը ուսուցչին անհրաժեշտ է, որ կարողանայ ողոշանել իւր մէջ եռանդ, վստահութիւն և սէր գէպի աւանդելի առարկայքը, և դէպի իւր գործը:

2: Աւսուցչի ինքնակրթութեան ուղղութիւնը սրաշւոմ զիտաւ օրապէս այն ուղղութեամբ որին նա նուիրում էրան։ Աւսուցչիք պիտի ինքնակրթութի այն բոլոր բաների մէջ ։ որոնք կարող են արգենաւոր ներգարծութիւն ունենալ աշակերտաց ուսման և կրթութեան յառաջադիմութեան վերայ։

3) Աւոսուցի ինքնակրթութեան ծառայող միջոցները. - ա) Շարադրութիւնների ընթեռնուցն ու ուսանիլը. բ) զիտել մանկանց և ուսուցանելնոցա. գ) մանկավարժական խօսակցութիւններ. Խօսենք սոցանից իւրաքանչիւրի վրայ. - ա) Շարադրութիւններ կարգավն ու ուսանիլը ծառայումն որպէս հասարակ միջոց ինքնակրթութեան. Շարադրութիւններ կարգալով ուսուցիչը կամ իւր մտքի մէջ նորոգումէ այն ամենը, ինչ որ առաջուց սեպհականոցրած է եղել իւրեան, կամ թէ ծանօթանումէ նոր լուսաւորութեան իրեն ծանօթ տեղեկութիւնների նոր կօմբինացիայի հետ, կամ թէ ստանումէ նոր տեղեկութիւններ. Ընթերցանելի շարադրութիւնների մէջ ուսուցչին աւելի յարմար են նորանք, որոնք ունեն մի որ և իցէ յարաբերութիւն նորա գործունէութեան հետ, ու բեմն, ամենից առաջ այն շարադրութիւնները, որոնք վերաբերումն դասական առարկաների այն շրջանին, որոնց վերաբերումն է ուսուցի աւանդելի առարկան, որովհետև մի դասական առարկայի տեղեկութիւնները պարզութեն միւս համատեսակ առարկաների տեղեկութիւններով: Ուստի այդ վերջիններն ուսանիլը անհրաժեշտ է ուսուցի համար: Ուսուցիչը պէտքէ շարադրութիւններ կարգավոր ձանապարհով որքան կարելի է պարզէ աւանդելի առարկաների բոլոր, ոչ թէ միայն զիմաւոր, այլև երկրորդական հարցերը. Բացի սորանից ուսուցչին անհրաժեշտ է նոյնպէս ուսանիլ այն շարադրութիւնները, որոնք կարող են պարզել նորա գործունէութեան ուղղութիւնը, այսինքն անհրաժեշտ է կարգավ և ուսանիլ մանկավարժական շարադրութիւններ (ֆիզիքական, մտաւոր և բարոյական կրթութեան համար, մանկավարժութեան պատմութիւն և այլն) և հաւասարապէս այն զիտել թեան վերաբերեալ շարադրութիւնները, որոնց վրայ հիմնած է մանկավարժութեան դրութիւնը, հոգեբանութիւն (պսիխոլոգիա) տրամաբանութիւն (լոգիկա) առողջարանութիւն (րիտենա): Ուսուցիչը պիտի կարգայ և այնպիսի շարադրութիւններ, որոնք կարող են պահպանել և գրգռել նորա մէջ զեղեցիկ մտքեր և զգացումներ և կամ այնպիսիններ, որոնք ընդհանրապէս ունին ընդհանուր կրթողական նշանակութիւն: Այդ գրութեան մէջ ուշագրութեան արժանի են մանաւանդ բանաստեղծական և պատմական հեղինակութիւնները: Ուսուցիչը ի հարկէ, պէտքէ կարգայ կարելոր ուշագրութեամբ Ուսուցիչը կարգումէ ոչ թէ ժամանակ անցկացնելու, այլ այն օգտի համար, որը նա կարող է ստանալ կարգալուց: Կարգալու ժամանակ ուսուցիչը աշխատումէ հաշիւ տալ իւրեան կարգացածի համար և մտաբերել այն, որը կարող է մեծ նշանակութիւն ունենալ նորա համար: Խօրհուրդ եմ տալիս, որ կարգավոր ժամանակ ուսուցիչը նշանակէ իւր առձեռն տեսրակի մէջ


5760-54

3



այն մտքերը, որոնք կարօղ են հարկաւորել նորան։ Խորհուրդ եմ տալիս նոյնպէս զրել կարդացածի բովանդակութիւնը։ Այդ օգնումէ միշողութեանը։ Բացի սորանից արձանադրւած մոքերը զիւրին կերպով կարօղ են նորոգւել յիշողութեան մէջ։ 2։ Մանկանց զիւրել և ուսուցանելը նոյնպէս ծառայումէ որպէս միջոց ուսուցչի ինքնակրթութեան Դիտելով մանկանց, ուսուցիչը ծանօթանումէ նոցա հոգեկան կազմութեան և մասնաւորապէս նոցանից իւրաքանչիւրի հետ և այդ կերպով քաղումէ իւր համար շատ կարեւոր տեղեկութիւններ։ Մանկանց ընդհանրապէս և իւրաքանչիւր աշակերտի յատկապէս բնութիւնն իմանալը մասնաւորապէս անհրաժեշտ են ուսուցչի համար։ Միայն այդ տեղեկութիւններով ուսուցիչը կարօղ է կատարելապէս ներգործել իւրաքանչիւր մի աշակերտի վրայ։ Ուսուցանելը օգնումէ ուսուցչի ինքնակրթութեանը աւանդելի առարկայի և նորամեջողիկան մշտկութեան մէջ։ Ուսուցանելով ուրիշներին ուսուցիչը ուսանումէ և ինքը։ Ամեն մի ժամանակ ուշադիր ուսուցիչը ուսուցանելով մանուկներին, ինքը ևս փոքր ի շատէ յառաջ է զնում։ Լուսաւորութեան շաղի մէջ։ Ուսուցիչը, եթէ ձգտումէ կատարելագործելու իւր աւանդելու ձեւ, տարեց տարի յառաջդիմումէ, և այդ յառաջդիմութեան ոչ պակաս օգնումէ նորա զործնականութիւնը։ Ի զուր է մտածել, որ գէպի աշակերտները միշտ միտկերպ վերաբերելը և միենոյն տեղեկութեանց մշտապէս կրկնելը նոր աշակերտների հետ արդելք է լինում ուսուցչի ինքնակրթութեանը։ Եշակերտները չեն մնում միենոյն աստիճանի վրայ, նորա հետեւարար յառաջդիմումն և նոցա հետեւարար յառաջդիմութիւնը ներկայացնումէ մի լայն առարկեղ ուսուցչի ինքնակրթութեան։ Աշակերտաց յառաջդիմութեանը մի զասատնից միւս զասատուն փոխուելու ժամանակ, հարկաւոր է յաջորդել նորանց նորանոր տեղեկութիւններ։ Այդպիսով ուսուցիչը չէ մնում միենոյն առարկայի վրայ։ Ինչ որ վերաբերումէ իւրաքանչիւր տարի այս միաձեւ կրկնութիւններին և տեղափոխութիւններին միենոյն զասատան մէջ։ կասենք, որ թէ և միենոյն տեղեկութիւններն են աւանդում, սակայն նոցա աւանդելու ձեւ իւրաքանչիւր տարի կարօղ է ենթարկեիլ փոքր ի շատէ փոփոխութեան, որովհետեւ իւրաքանչիւր տարի ուսումնարան մտնումն նոր աշակերտները իսկ նոր աշակերտները պահանջումն յայտնի առարկայի մի այլ մշակութիւն։ Բացի սորանից գասական առարկայի մեջողիկան միշտ կատարելագործումէ։ Հետեւելով այդ կատարելագործութեանը՝ ուսուցիչը լաւացնումէ իւր մշակութեան ձեւ, սորանով և կատարելագործումէ ինքը։ 4) Աերջապէս մանկավարժական հարցերին վերաբերեալ խօսակցութիւնները իւր պաշտօնակիցների կամ այն անձանց հետ որոնք հետաքրքրումն այդ հարցերով, կազմումէ նոյնպէս մի կարեւոր միջոց ուսուցչի ինքնակրթութեան։ Խօսակցութեան ժամանակ ուսուցիչը յայտնումէ իւր նկատողութիւնները, իւր կարծիքը մանկավարժական գործի այս կամ այն հարցի վերայ, և իւր կողմից լսումէ իւր խօսակցի կարծիքը, Այդպիսով նորա երկուսը ևս օգուտ են քաղում՝ այդ խօ-

12-6478



սակցութիւնից։ Չատ ժամանակ խօսակցութեան մէջ պարզւումն այնպիսի մարեր որպաց ուսուցիչը երբէք չէր կարօղ համնիլ։ Եւր մաքերի յայտնելը հենց օգտակար կարօղ է լինել մենակ այն կողմից։ որ նա պարզում և շաղկապումէ իրարու հետ այդ մոքերը։ Առ հասարակ իրականութիւնից յառաջացած մոքեր փոխանակելու և հարցերով խորհելու համար ծառայումն մանկավարժական խորհուրդները կամ ուսումնարանանի ուսուցչութիւնների ժողովները։ Այդպիսի ժողովների օգուտը ի հարկէ շատ մեծ է։ Քայլ բացի ժողովներից իւրաքանչիւր մի ուսուցիչ պէտքէ աշխատէ իւրաքանչիւր մի յաջող զիպուածում մանկավարժական գործնականութեան մէջ պատահող այս կամ այն երևոյթի վրայ խորհուրդ անելու իւր ընկերների կամ այնպիսի անձանց հետ որոնք ծանօթ են ուսումնարանական կեանքին։ Այդպիսի խորհրդակցութիւնները ոչ միայն օգնումն ուսուցչի ինքնակրթութեանը այլ և պահպանում ու ծննդնում են նորամէջ եռանդ օգտակար լինելու մանկավարժական ասպարիզում։ Քայլ սոքանից մանկավարժական խօսակցութիւնները ուսուցչաց մէջ օգնումն նոցա միանալուն իւրեանց գործողութեան մէջ և այդ շատ մեծ նշանակութիւն ունի կրթութեան և ուսման գործի մէջ։

Կ Խօսելով ուսուցչի ինքնակրթութեան միջոցների վրայ հարկաւոր է նկատել որ նոքա միայն այն ժամանակ կարօղ են գործնական օգուտ բերել ուսուցչին երբ որ նորա մէջ զգալի է կատարելագործելու փափագ։ Առանց այդ փափագի բոլոր միջոցները անօգուտ են։ Միայն որոնողը կարօղ է գտնել և միայն նա կարօղ է կատարելագործել ով որ ջանք է անում կատարելագործելու։ Գիտութիւնը ինքն իրեն չէ յանձնում իւրաքանչիւր մի մարդու նա ստացւումէ միմիայն արխոջան աշխատութեամբ այն անհատի որ ցանկանումէ ստանալ նորան։ Քայլ այդպիսի աշխատութեան համար էլ հարկաւոր է ներքին զգացումն հարկաւոր է ունենալ կամք։

5. Քայլ մտաւոր կատարելագործութիւնից ուսուցչն հարկաւոր է կատարելագործել իւրան բարոյականապէս։ Այդ համարեա թէ իւրաքանչիւր մի անձի պարտաւորութիւն է և առաւելապէս ուսուցչի որ ծառայութիւնը օրինակ այլոց Աւսուցիչը միշտ պէտքէ ուշագրութիւն դարձնէ իւր վերայ պէտքէ խիստ վերաբերի դէպի ինքը և իւր գործունեութիւնը գնահատէ բարոյական կէտից նա միշտ պէտքէ ունենայ իւր առաջ բարոյական կատարելագործութեան իդէալ որին նա ճգնաւմէ։ Այդպիսի մի իդէալ գծագրւած է Փրկչի սուրբ վարդապետութեամբ Աւնենալով իւր առաջ այս իդէալը և ճիզն թափելով դէպի նա ուսուցիչը երբէք յետ չի մնալ իւր բարոյական կատարելագործութեան մէջ ։ Նորան միշտ դէպի ինքը կձգու է բարոյականութեան բարձր աստիճանը և միշտ մի արձակ ասպարէղ կմն այ նորա բարոյական ինքնակրթութեանը։

(Յարչէմ.)

Ա. Զատարչեանց